

Վերոյիշեալ հանգամանքները ի նկատի առնելով, ես հաւանական եմ համարում, որ մեր մեծ հայրենասէր Խաչատուր Աբովեանը 1848 թուին աքսորուած է եղել Սիրիւր եւ որի գերեզմանը գտնուում է Հեռաւոր Արեւելքի Ախոտսկ քաղաքում:

ՌՈՒՐՆՆ Ժ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԱՍԵԱՆ

Եջմիածին:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՐԻՒՆԻ ՄԱՍԻՆ

(Պ. ՖԵՏԳԼԵԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ)

Ա.

Անկարող ստանալ ներկայումս եւ կանոնաւորապէս հետեւել ՀԱԻ, նորերս միայն հնարաւորութիւն ունեցայ թերթերու տարուայ թիւերը եւ ի միջի այլոց ծանօթացայ Պ. Ֆետգլեանի գրութեան (ՀԱ, 1926, թ. 5—6):

Աւելորդ չեմ համարում նախ քանի մի խօսք ասել յարգելի պարոնի այն յայտարարութեան առթիւ թէ Մաշթոց անուան ստուգարանութիւնը առաջարկել է ինքը տարիներ յառաջ դեռ 1905 թուին եւ ուրեմն առաջնութեան պատիւն իրեն է պատկանում:

Յաւում եմ, որ պարոնի ակնարկած ուսումնասիրութեան ցայտմ անդէտ մնալով, ակամայից անհաճութիւն եմ պատճառել ոչ միայն նրան, այլ եւ ինձ, որովհետեւ անդիտութիւնն այսպիսի դէպքերում անախորժ է ամէնից յառաջ անտեղեակ բանասէրին, բայց աւելի եւս ցաւում եմ, որ պատուական պարոնը իր առաջնութիւնը պաշտպանելով չէ կարողացել մնալ վայելչութեան սահմանների մէջ:

Պ. Ֆետգլեան իրեն ներելի է համարում՝ կրկնել յիշողութիւնս եւ այնտեղից վեր հանել իր գիտի «վերջիշումը» այն հիմամբ, որ նուաստս ստանում էր «Անահիտ» հանդէսը, ինչպէս նեղութիւն է քաշել ստուգելու եւ հետեւապէս հետեւում իր գիտական աշխատանքներին, եւ ապշեցնող կէտ է

համարում, որ ես բերում եմ նոյն երկու օրինակները Տիրոց եւ Բարոց «նոյնութեամբ ոչ աւել եւ ոչ պակաս»:

Ասել է թէ 1905 թուին բախտ եմ ունեցել կարգալու Պ. Ֆետգլեանի ուսումնասիրութիւնը, պահել եմ յիշողութեանս ծալքերում նրա գիտը, որպէս զի 1926 թուին հոչակեմ եւ որ վշտալին է կորցեմ պարոնի փառքը: Ապշեցնող է համարում պարոնը օրինակների զուգադիպումը: Կարծեմ, հայ բանասէրին, անգամ ամենախոնարհին յայտնի պիտի լինի, որ հայոց մատենագրութեան մէջ ուրիշ անուն չկայ —ոց վերջաւորութեամբ, բացի երկուսից Տիրոց եւ Բարոց: Չյիշել այս, նշանակում է անբարեմիտ լինել եւ անտեղեակ ընթերցողին մոլորեցնել: Երկու իշխանական անուններն էլ ծանօթ են ամէն մի դպրոցականի Վարդանանց եւ Վահանանց պատմութիւնից եւ հազիւ թէ պէտք կայ ուսանելու Պ. Ֆետգլեանից: Այս միեւնոյն է, եթէ մի քերական յաւակնէր, որ միւսներն իրենից են քաղել, ասենք, փլուզանեմ եւ կորուսանեմ եւ կամ նման օրինակները:

Բ.

Այս ակամայ տողերից յետոյ դառնանք խնդրի էութեան, որ աւելի կարեւոր է, եւ կը տեսնենք, որ զուգադիպումն իսկ լոկ ձեւակաւն է:

Պ. Ֆետգլեան իր ասելով համեմատել է Մաշթոց Մաղդակի հետ, որովհետեւ mazd փոխուում է mašt-ի ինչպէս yazd-ը՝ yašt-ի: Եթէ այս է նրա հիմք, համեմատութիւնը սխալ է:

Պարսկերէն yazd- երբեք չի կարող փոխուել yašt-ի: Առաջինը ծագում է yazata ձեւից, որ է ապառնի դերբայ կրաւորականի, իսկ yašt է անցեալ դերբայ կրաւորականի yaz-բայից: Երկուսն էլ արմատական են, բայց հնչական փոխանցման կապ չկայ մէջտեղ:

Ուրիշ է ծագումով եւ կազմով mazd-ը <mand-dha, առաջինը՝ maⁿd- նոյն է յուն. μαδ-εῖν, սլաւոն. мыѡ-р, երկրորդը՝ dha-դնել՝ արմատը: d փոխուում է z յաջորդ dh-ից յառաջ եւ այս փոփոխութիւնն այլ կարգի է քան յազդ եւ յաշտ եւ mazd- անցնել mašt-ի չէ կարող:

Ինչ վերաբերում է մեր համեմատութեան, ելակէտս եւ մերձաւոր առիթը

Մաժդ-ոց ընթերցումն է, որ յիշեցնում է անմիջապէս Մազդ- բառը առանց որ եւ է ճիշդի: «Գիրք թղթոց» պահել է եւ Մաժդ-ոց ձեւը: Միւս յիշատակարաններում ընդունուած ընթերցումն է Մաշտ-ոց եւ Մաշք-ոց: Ստուգաբանական փորձերից յառաջ պէտք է բանասիրական ճշգրտման տարբեր գրութեանց փոխարդարձ յարաբերութեան: Նայելով թէ որ ձեւը կը համարուի հնագոյն ըստ այնմ եւ ուղղելու է ստուգաբանական որոնումները:

Սկզբնական ձեւը թւում է թէ Մաժդոց է, որ դառնում ենք Պրոկլի թղթի մէջ, որ մատենագրութեան անդրանիկ վաւերագիրներէն է: Պրոկլի թղթի պատասխանի մէջ կարգացւում է Մաշդոց: Նոյն ընթերցումը պահում է եւ «Կնիք Հաւատոյ» հին եւ կարեւոր յիշատակարանը ինչպէս եւ միւսները, որ օգտուել են Պրոկլի եւ Սահակի թղթերից (Աբրահամ կաթողիկոս, Գաղիկ Թագաւոր եւ այլ): Համեմատաբար ուշ ժամանակ են երեւան դալիս Մաշտոց եւ Մաշքոց գրութիւնները:

Եթէ առաջնութիւնը տալու լինինք Մաժդ-ոցին, իսկոյն աչքի է ընկնում նրա հնչական մերձաւորութիւնը Մազդ-ի: Սակայն իրանական դետնի վերայ Մազդ- չէ կարող տալ Մաժդ-, որովհետեւ պակասում են հարկաւոր պայմանները, օրինակ *i* կամ *r* հնչիւնը նախընթաց վանկում, որպիսի գրութեամբ *z* փոխւում է *ž*:

Մնում է մեկնել հայերէն, թերեւս, -ոց մասնիկի -ոց հնչիւնի աղբեցութեամբ: Մի ենթադրութիւն որ կը մնայ այդպիսին, մինչեւ որ ուրիշ օրինակով չհաստատուի այս հնչական անցումը:

Բայց կարող է պատահել, որ Մաշտոց եւ Մաշքոց սովորական գրութիւնը լինի եւ հին եւ հարագատ ձեւը, եւ սրանից յառաջացած Մաշդոց եւ Մաժդոց արեւմտեան արտասանութեան ազդեցութեան տակ: Մեր լեզուի արեւմտեան բարբառի առանձնաչափութիւնը շատ աւելի հին է քան ենթադրւում է:

Այս դէպքում պէտք է հրաժարել յիշած ստուգաբանութիւնիցս եւ համեմատել Մաշտոցը մի ուրիշ անուն հետ, որ դարձեալ իրանական է եւ հին:

Հերոդոտը (VII 79) յիշում է *Máσιστος* անունը, որ կրում էր Քսերքսի զօրականներէն մէկը, նա որ առաջնորդում էր Սապիր

(հայ Սպեր) ցեղի բանակը: Ասել է թէ Հայաստանի սահմանների մէջ յայտնի է եղել այդ անունը: *Masistus* գերադրական աստիճան է *mas-*, յունարէն *μασ-ρός* 'երկար' բառի, ուրեմն *masišta* - 'ամենից երկարագոյն': Կարող է լինել գերադրական եւ *maz-* 'մեծ' բառի, *mazišta* 'ամենամեծ': Երկու դէպքում էլ հայերէնում սպասելի է Մաշտ- համաձայն իրանականի:

Իբրեւ ստուգաբանութիւն նոյնչափ հաւանական է, որքան առաջինը: Խնդիրն այն է թէ ո՞ր ընթերցումն է հնագոյնը Մաժդոց/Մաշդոց թէ Մաշտոց/Մաշքոց:

Հաւանութիւնը առաջին կողմն է, դատելով ըստ յիշատակարանի: Նրա վերայ հիմնած ստուգաբանութիւնն այն առաւելութիւնն ունի, որ անուան տալիս է *Teophore* 'աստուածակիր' ծագում, որ այնքան բնորոշ է իրանական անուանակոչութեան:

Ինչ վերաբերում է -ոց վերջաւորութեան, ծագումը մութ է, ինչպէս եւ նրա կապը -ոց մասնիկի հետ: Յատուկ անունների մէջ բացի *Մաշթոցից* նոյն մասնիկը ունին *Տիքոց* եւ *Բաքոց*: Առաջին բաղաձայնի իշխանի անուն էր, որ Վասակի համախոհներէն էր, իսկ երկրորդը՝ Վահանի ընկերներից եւ Պապի որդի: Պապ եւ Բաք նոյն անուններն են, մէկը պարթեւ ձեւն է միւսը սասանական: Հայրը հին անունն է կրում, որդին նոր: Ինձ յայտնի է եւ մի երրորդ անուն Ափոց, որ սակայն դեռ ստուգելի է ընթերցումը թէեւ հաւանական է, որ Յափիկ Մովսէսի եպիսկոպոս անունն ուրիշ ձեւն է: Պ. Ֆնտգելեանի նկատողութիւնը իմ բերած օրինակների վերաբերեալ անպատեհ է, քանի որ խօսք չի կարող լինել «աւել պակաս»ի մասին: Իրեն եւ ընթերցողներին եմ թողնում դատել «զուգադիպումը» արժէքը լեզուագիտական եւ բանասիրական տեսակէտներից:

Գ.

Յարգելի պարոնը բարի ցանկութիւն է ունեցել՝ ցրելու իմ «չուարումս» Մեսրոպ անուն հանդէպ: Ինչո՞ւ հայ լուսաւորութեան հայրը կրկնակի անուն է կրում եւ ինչո՞ւ նրա ձեռնասուն աշակերտը Կորիւնը չի յիշում Մեսրոպ անունը, ինչպէս եւ Փարպեցին: Արդեօք մէկը աշխարհական անունն է, միւսը՝ հոգեւոր թէ մի ուրիշ զաղտնիք կայ — այս հարցերը սպասում են

դեռ լուսաբանութեան, եթէ երբեք չէ լուսաբանելու յոյս կայ: Պ. Ֆնտգլեան կարծում է, որ այս կնճիւրը արդէն լուծել է եւ լուծել շատ հեշտութեամբ: Մեսրոպ անունը չինճու եւ արհեստական է համարում եւ իորենացու հնարածը: Լաւ է ասած, մարդու աչքը դուրս դայ անունը դուրս չգայ: Որպէս թէ իորենացին կամենալով Մաշթոցին համեմատել Սերովբի հետ, ստեղծել է Մար-Սերովբ, որից Մեսրովբ: Մեղք է պատմահօրը վերագրել այսպիսի անհեթեթութիւն: Մաշթոցին «Սրովբէատես» կոչողը դիտենալու էր արդէն Մեսրոպ անունը: Բառախաղը Մեսրոպից է ծագել եւ ոչ հակառակը:

Իր ենթադրութիւնը արդարացնելու յուսով Պ. Ֆնտգլեան յիշում է, որ իորենացին ճարտար է անուններ յերիւրելու մէջ, որի մի ապացոյցն է Անուշաւան, որ աղաւղումն է Անուշաւանի: Այս առթիւ քար նետել պատմահօր երեսին անտեղի է: իորենացին, որի մօտ կարգալու է Անուշաւան փոխանակ Անուշաւանի (որ գրչադիրների սխալն է Արտաւան եւ միւս-ւան, -ւան յանգող անունների աղղեցութեամբ) առել է այդ խորհրդաւոր անունը Արայի դրոյցներից որ Աղոնիսեան տիպի հայ աստուածութեան պատկեր է մեռնելու եւ յառնելու յատկութեամբ, ինչպէս ցոյց ենք տուել ուրիշ տեղ:

Իորենացուն գողանալ տալով իորով Նուշիրուանի մականունը պարունը տեսնում է նոր ապացոյց որ իորենացու պատմութիւնը խմբագրուած է Զ. դարում: Ներկայումս արդէն փաստ է, որ իորենացու պատմութիւնը գրուած է 680 թուականից յետոյ եւ Զ. դարի մասին խօսք անգամ չի կարող լինել: Դառնալով Մեսրոպ անուն, պէտք է ձեռնադհ մնալ նոր մեղքեր բարդել պատմահօր առանց այն էլ ծանրաբեռնուած ուսերին: իորենացին հեղինակ չէ «պատմութիւն վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրովբայ» գրութեան եւ ոչ հեղինակ ողորմելի բառախաղին:

Մաշթոցի երկրորդ անուն իսկական հնչումը նմանապէս անորոշ է, ինչպէս եւ առաջին անուն: իորենացու պատմութեան մէջ Մեսրոպ է եւ մենք գոնէ տրամադիր էինք առաջնութիւնը տալու այս գրութեան: Սակայն «Կնիք Հաւատոյ» ունի Մեսրոբ Պրովի թղթի պատասխանում այնտեղ, ուր

«Գիրք թղթոց» ունի Մաշթոց: Ի նկատի առնելով «Կնիք Հաւատոյ» կարեւոր ժողովածուի պատկառելի հնութիւնը հաւանական է թերեւս, Մեսրոբ համարել աւելի հին քան Մեսրոպ:

Այս պայմանով հնարաւոր եմ գտնում առաջարկել հետեւեալ ստուգաբանական փոփոխութիւն:

Մեսրոբ Mesrob հաղորդ է իրանական մեծ աստուածութեան անուն, որ է Միտր: Նա բաղկացած է երկու տարրից *Meh-srob, ուր առաջին մասը՝ *Meh ձեւափոխումն է Միտրի անուն: Յայտնի է, որ հին Mitra տալիս է Midra, Mihr, Meh, Mer, Mel, որ տեղից եւ հայերէնում Միհր, Մեհ (մեհան), Մեր (Մերչապուհ), Մեհր, Մլեհ (< պրս. Milād հին Mihrdat-ից), Μελάς (բիւզանդական հայ գործիչ):

Երկրորդ տարրը -սրոբ նոյնն է ինչ որ տեսնում ենք իորով անուն մէջ, պարսկերէն յօսրօբ, <*hu srāva; srava- պահուած է հայերէն փոխառեալ դ-սրով բառի մէջ, համապատասխանում է յունարէն χλῆος, սլաւ. слово եւ նշանակում է իսկապէս «խօսք, գովք» (հմտ. ուսւ. слово 'խօսք' եւ слава 'փառք'): Հայերէն խո-սրով, դ-սրով աւելի հին է քան իրանական յօ-srōb, բայց վերջինս պատահում է նաեւ աւեստայում, dura-srōb 'վատախօս' բառի մէջ, որ հակադրադաշտական եւ հերձուածող կարաւ կամ կարապան դելի մակդիրն է:

Այս վերլուծումով Մեսրոբ < Meh-srōb նշանակում է 'Միհր գովող, փառաբանող' կամ 'գովեալ ի Միհրէն': Յունական եւ սլաւոն յատուկ անունների մէջ եւս ընդունուած է այս բառը, ինչպէս Θεμιστο-κλής, Vladi-slav, ուր κλής < κλέης, *kleues, եւ -slav հաւասար են -srob, -սրորին:

Եւ վերջապէս Meh-srōb-ի Mesrōb փոխանցման, այսինքն -h հնչիւնի կորուստի օրինակ կարող է ծառայել պարսկերէն Mihrāb անունը որ հայերէն հնչում է Մեհրաբ եւ Մերաբ: Mehrāb եւս կազմուած է նոյն Mihr եւ āb բառերից, āb, սանսկր. ābha նշանակում է 'փայլ', որով Mehrab 'Միհրափայլ' իմաստի կողմից մօտենում է Մեսրոբին 'Միհրափայլ':

Առաջարկիս ստուգաբանութեան թերիքն այն է, որ համապատասխան անունը չենք գտնում իրանական լեզուներում: Բայց այս թերիքը առանձին կարեւորութիւն չունի:

Հայերէնում կան շատ բառեր, որ իրենց կազմով իրանական են անկասկած, թէեւ չեն մնացել կամ միայն նրանց հաղիւ նշմարելի հետքերն են մնացել իրանում:

Ամէն պարագային Մեսրոբ իրանական տեսք ունի եւ մեր փորձը ապացոյց է որ հնարաւոր է պատշաճ ստուգաբանութիւն գտնել: Յատուկ աննունների մեկնութիւնն ինքնին գոյութիւն է, մանաւանդ, երբ եղակի օրինակներ են ինչպէս Մաշթոց եւ Մեսրոպ: Նրանց կապը Արամազդ եւ Միհր մեծ աստուածների հետ հաւանական է, բայց փաստ դառնալու համար պէտք է որ վստահ լինենք, որ Մաթոց եւ Մեսրոբ հնագոյն ձեւերն են:

Պ.

Չէինք ուզենալ անուշադիր թողնել եւ Պ. Ֆնտզլեանի բանասիրական նկատողութիւնները մեր աշխատութեան առթիւ, ուր գովական ջանք է անում մոլորեալիս սխալները ուղղելու: Մաշթոցի գործունէութեան մասին խօսելիս ինչ ինչ գիտողութիւններ էի արել Կորիւնի երկի նկատմամբ, կասկած էի յայտնել, որ երկը գրուած է թերեւս Վահանի մահից յետոյ:

Յարգելի բանասէրը փորձում է այլ կերպ թարգմանել եւ մեկնել Վահանին նայող հատուածը:

Օգնութեան է կանչում փոքր Կորիւնին եւ Ագաթանգեղոսին եւ կրկնակի յանցանք է գործում իրեն մեղսակից անելով անմեղ հեղինակներին:

«Իսկ բարեացապարտին Վահանայ յանկարծաւ կենաց ամենեցուն լինէր, որ աշխարհածնին հայրենեացն սեպհական որդի գտեալ, շնորհաւքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ մերձաւոր կենակից վայելէր եւ զի քստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան» . . . :

Ահա ինչպէս է հասկանում այս հատուածը Պ. Ֆնտզլեան. «Եթէ լաւ միտ դրուի, այս հատուածը ոչ թէ Վահանի մահը կը նշանակէ, այլ ապրիլն եւ բարեւոք ապրիլը իբր օգնական, պաշտպան, ընտանի ամէն անոնց որոնք Մաշթոցի եւ Մահակայ աւետարանական ընթացքով Ս. գիրքը խօսեցնել տարով . . . վերստին ծնան ամբողջ Հայաստան աշխարհը, Մահակ ու Մաշթոց հայրերուն սեպհական որդի գտնուեցան եւ յանձին Վահան Ամատունիի յանկարծ ուրեմն կը վայելէին բարեբար, պաշտպան, ընտանի,

«մերձաւոր» «կենակից» հոգեւոր նոր ծնունդին բերմամբ:

Ասել է թէ Պ. Ֆնտզլեանը կամայականորէն հակառակ քերականական կանոնների ընդգծուած որ, որդի, լինէր յատկացնում է «ամենեցուն» եւ ոչ Վահանին: Թողնում է «բարեացապարտին» սեռական հոլովը առանց բացատրութեան: Թարգմանութեան փոխարէն առաջարկում է մի մեկնութիւն բռնադրօսիկ եւ անյարիր, ինչպէս կը տեսնենք:

Վահանի պաշտպանութեան եւ հովանաւորութեան պէտքն էլ աւելի զգալի էր, շարունակում է Պ. Ֆնտզլեան, զի հայրերը վախճանուել էին: Այսպէս է ուղղում կապել վերջին նախադասութիւնը նախընթացի հետ: Պարոնը հաւատացնում է, որ իրեն պէս են հասկացել յիշեալ հատուածը նաեւ փոքր Կորիւնը եւ Ագաթանգեղոս, այն է «յանկարծաւաս»ով մահ չեն հասկանալ այլ հասնիլ, պաշտպանել:

Թող բողոքէ ինքը փոքր Կորիւնը այս ամբաստանութեան դէմ:

«Իսկ բարեացապարտն Վահան յանկարծաւ կենաց ասպնջական ցանկալի ամենայն սրբոց լինէր որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենացն յաւիտեմից լինէր»:

Իմաստը աներկբայելի է եւ հակառակ Պ. Ֆնտզլեանին, որ անտես է արել սրբոց եւ յաւիտեմից բառերը: Ասպնջական ծագում է ասպինջ -ից, որ թւում է թէ նշանակում է 'կայարան, ձիահանգիստ': Ինչպէս հնում, այնպէս այժմ կայարանները կամ կարուստարանները միաժամանակ եւ հիւրանոց են, իջեան: Այստեղից ասպնջական նշանակում է 'հիւր, անցորդ' եւ 'հիւրընկալ, հիւրանոց': «Ասպնջական լինել» կարող է ունենալ երկու իմաստ՝ 'ընդունարան լինել, հովանաւորել' եւ 'անցորդ կամ հիւր լինել': Փոքր Կորիւնը գործ է ածում երկրորդ մտքով թէեւ թւում որ քաղուած է մեծ Կորիւնից, որ նոյն դարձուածքը կիր է առած առաջին իմաստով իբր հիւրընկալող (Սուրս իշխանի համար ասուած է «ասպնջական եղեալ» Մեսրոպայ (էջ 20), ինչպէս եւ Պօղոս առաքեալի բարեկամների նկատմամբ՝ «զըրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց» (էջ 5): Հատուածի իմաստն այն է որ Վահանը՝ մահը հառած, ցանկալի հիւր է

լինում բոլոր սրբերին եւ Քրիստոսի շնորհով մերձաւոր դառնում յաւիտենական կեանքին: Ուրիշ խօսքով Վահանը մեռնում է եւ արժանանում սրբերի հաւասար յաւիտենական կեանքի:

Հետաքրքրական է, որ մեծ Կորինթի մօտ հայրերի մահը ամփոփող վերջին նախադասութիւնը փոքր Կորինթը կապում է յաջորդ պարբերութեան հետ եւ այսպիսով զրկում է Պ. Ֆնտգլեանին այն նեցուկից, որ որոնում է նա սոյն նախադասութեան մէջ ի նպաստ իր ըմբռնումին: «Եւ այդ ըստ աքրինակի գրեյոցս առ ի մէնջ զերանելեաց սուրբ հարցն զվարս եւ զվախճան փոքր ինչ պատմելով ի կատարումն զբանս ածից, ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ...» եւ այլն: Այստեղ «ի կատարումն», թէեւ առնուած է իր բնագրից, բայց ուրիշ կիրառութիւն ունի քան այնտեղ, նման «ասպնջական եղեալ» դարձուածքին, որին տուած է ուրիշ նշանակութիւն քան մեծ Կորինթի մօտ է: Իմաստն այն է թէ որովհետեւ հայրերը մեռել էին, որպէս ինքն արդէն գրել է, ուստի թող ոչ ոք չկարծէ որ ուրիշ բերանից է քաղուած կամ զրուցներից: Ոչ, ինքն աւանատես է եղել հայրերի եւ կերպարանքին եւ գործերին: Այս ուրիշ բան է քան ենթադրում է Պ. Ֆնտգլեան, որի կարծիքով, Վահանը բարի ժամին է հասնում, որովհետեւ սուրբ հայրերը վախճանել էին եւ տեղը բաց էր մնացել:

Ազաթանգեղոս եւս յուսալի բարեխօս չէ պատուական հակառակորդիս համար: Բաւական է ասել, որ վիճելի բառը՝ «յանկարծահաս» Ազաթանգեղոս փոխել է «յանկարծակամ»ի հետեւապէս վերցրել է միջից վէճի առիթը: Ազաթանգեղոս քննելի հատուածը շրջում է Տրդատի վերայ եւ արտադրում է հաւանօրէն փոքր Կորինթից առանց ջանալու հասկանալ էութիւնը, բաւականաչափ յիշեալ բառի թեթեւ բայց կարեւոր փոփոխութեամբ: Հակառակ փոքր Կորինթին, Ազաթանգեղոսին եւ նոր բանասէրների Պ. Ֆնտգլեան ուզում է այլ կերպ հասկանալ Վահանի հատուածը եւ կարծեմ, մոլորւում է ուրիշների «մոլորութիւնը» ուղղելու առաքինի ջանքի մէջ:

Յարգելի պարօնի առաջարկած իմաստն անընդունելի է: Վահանի մասին Կորինթը պատմում է, որ հաղարապետ էր, որ սուրբ հայրերի աշակերտն Հմայեակ Մամիկոնեանի

հետ, եւ որ Մեսրոպի մահից յետոյ նա է, որ հոգածու է եղել հանդիսաւոր թաղելու եւ խորան կանգնելու: Այս բոլորից յետոյ Կորինթին վերագրել այն, որ նա կարող էր ասել, թէ Վահանը յանկարծ հրապարակ եկաւ իրր հովանաւոր վերածնեալ երկրին եւ փոխարինեց մեռած սուրբ հայրերին, անաջող եւ անհիմն ենթադրութիւն է: Կորինթն այնքան մեծ համարում ունի Ս. Սահակի եւ Մեսրոպի մասին, որ երբեք չէր ներել իրեն կարծելու, որ Վահանը մի սոսկ իշխան՝ կարող էր նրանց տեղը բռնել: Կարիք չկար այսպիսի արտասովոր շոգոքորթութեան: Վահանից աւելի արժանի մարդիկ կային: Եւ սուրբ հայրերի փոխարէն արդէն «ի նոյն վերականգնութիւն դառնայր Յովհանն»ը, որ կապանքների մէջ արժանացել էր սրբութեան եւ «խոստովանողական անուն ժառանգեաց»: Եւ միթէ միայն Յովհան էր: Իսկ Յովսէփը, որ տեղակալ էր եւ որի հրամանով գրում է Կորինթը ո՞ւր էր, եւ ո՞ւր էին այն սրբազան եպիսկոպոսները, այն փայլուն կաճառը սուրբ հայրերի, որ Մեսրոպի մահից քանի մի տարի յետոյ պիտի ժողովուէին Արտաշատում ճակատ դնելու պարսից բռնութեան ի պաշտպանութիւն եկեղեցու: Պակաս չէին եւ քրիստոսասէր իշխանագույնք, Վարդան եւ Վասակ իրենց համախոհներով այն ժամանակ տակաւին սեւ եւ սպիտակ ոչխարների չէին բաժնուած եւ կազմում էին մի հաւատարիմ հօտ: Քանի մի տասնեակ լուսաւոր անունների շարքին Վահանն այնպիսի մի բացառիկ դէմք չէր, որ Կորինթը նրան պարգեւէր քրիստոնէից հովանաւորի, Սահակի եւ Մեսրոպի փոխանորդի նախանձելի պատիւը: Ոչ, Վահանը երեւան է դալիս Կորինթի մօտ, համեստ դերում, եթէ միայն չազաւղենք նորա խօսքերը:

«Իսկ բարեացապարտին Վահանայ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր...» նշանակում է «բարեացապարտին Վահանայ հաս կենաց յանկարծ լինէր ամենեցուն», այսինքն Վահանի կեանքի վերջը անսպասելի էր բոլորի համար: Կորինթը սիրում է ճարտասանական ոլորուն դարձուածներ: Յանկարծահաս՝ ածական չէ, այլ գոյականի իմաստ ունի եւ կախուած է «բարեացապարտին Վահանայ» սեռական հոլովից: «Ամենեցուն» չի վերաբերում «կենաց»ի, այլ ենթարկու է «յանկարծ»ի, որ միացել է «հաս» ի հետ: Նոյնպիսի եղանակով Կորինթը գրում

է՝ «Հայրենակատար մեծարեալ պայմանաւ», այսինքն մեծարեալ կատարմամբ պայմանի հայրենեաց (կամ հարց)։ «Հաս կենաց» նոյնն է ինչ որ օր-հաս մօտաւորապէս, եւ նոյնանիչ է մահուան։

Հետեւեալ նախադասութիւնը վերաբերում է Վահանին եւ ոչ ամենեցուն՝ «որ աշխարհածնին հայրենեացն սեպհական որդի գտեալ, շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենակից վայելէր»։ Սրա իմաստը պարզելու համար պէտք է ուշադիր լինել «բարեացապարտ» բառին։ Ի՞նչ է նշանակում «բարեացապարտ» եւ ինչո՞ւ է Վահանը այդպէս կոչւում։

Բարեացապարտը նա է, որ ուրիշից բարիք է տեսել եւ ուրեմն պարտք մնացել, անհատոյց եղել։ Վահանի ստացած բարիքը մեկնում է հետեւեալ նախադասութեան մէջ, որ է գրական ծննդեամբ որդի է ճանաչուել հայրերի կողմէն, ուրիշ խօսքով աշակերտել է Ս. Սահակ եւ Մեսրոպին։ Արդարեւ վերեւ Կորին արդէն յիշում է, որ «գլխաւոր աշակերտներն» թւում գտնուում էր Վահան Ամատունին եւ Հմայեակ Մամիկոնեան։ Ասել է թէ Վահանը երախտապարտ է, որ սուրբ հայրերը վարդապետել են նրան եւ որդեգրել որպէս մտաւոր, գրադէտ գաւակ։ Դարձեալ երախտապարտ է Վահանը, որ Քրիստոսի շնորհով արժանացել է «մերձաւոր, կենակից» լինելու պատուին։ «Մերձաւոր եւ կենակից» հոմանիշ են եւ նշանակում են մօտիկութիւն։ Եթէ յաջորդ նախադասութիւնը՝ «եւ զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան» շարունակութիւն հոմաբեւեռ Վահանի նայող հատուածին, ինչպէս տպագրութեան մէջ է, որին համամիտ է եւ Պ. Ֆնտզեան, այն ատեն Վահանի վայելած մերձաւորութիւնը պիտի տեղափոխենք անանց աշխարհը։ «Շնորհաւքն Քրիստոսի» դարձուածն աւելի հաւանական է դարձնում այս ըմբռնումը նոյն իսկ անկախ վերջին նախադասութեան կցումից։ Վահանը կենդանութեանը որդի էր սեպհական հայրերի, իսկ մեռնելուց յետոյ Քրիստոսի շնորհով դառնում է կենակից հայրերին եւ այն աշխարհում, քանի որ հայրերը եւս արդէն վախճանած էին։ Փոքր Կորինը ճիշդ այսպէս է հասկացել, ասելով «մերձաւոր կենացն յաւիտենից լինէր»։

Սակայն աւելի հաւանական է, որ հայրե-

րին մահուան վերաբերող նախադասութիւնը կապուած է յաջորդ տողերին՝ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք . . .» կապն այնպէս է հասկանալու, որ հայրերը քանի որ մեռած էին, կարող էր կասկած ծագել, որ համբաւներից է քաղած հեղինակն իր պատմութիւնը։ Այս կասկածը վանել է ուղղում հաւատացնելով, որ ինքը գրում է որպէս «ապականեալ եղեալ կերպարանացն եւ լսող շնորհապատում վարդապետութեանն»։ Կը տեսնենք, որ հեղինակի երկիւղը խորհրդաւոր է։

Պարիս։

ՊՐՈՓ. Ն. ԱԴՈՅ

(Շարունակելի։)



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Փրանսահայ Տարեգիրք 1927. (Annuaire franco-arménien.) Պարիս, Հրատարակութիւն «Մասիս»։ Դին՝ Դաղդիա 20 Փր., Արտասահման 25 Փր.։

Նպատակալարմար տարեգիրք մը յարամնաց, հետաքրքրական ու հմտալից։ Աւելորդ վերադիրներու շուայում պիտի կարծէ ընթերցողն եւ «մեծաշունդ գովաբանութիւն» եթէ գիրքը տեսած չէ. իսկ եթէ գիրքը կարդալու սկսի, ամէն յօդուածին վերջը պիտի կրկնէ՝ այս տողերս գրողին հետ՝ «Նպատակալարմար» գիրք մը։

Գաղղիոյ հայ հին եւ նոր գաղթականութեան պատմական ապացոյցներու հաւաքածոյ մըն է գիրքս։ Երկրորդ թերթէն սկսեալ մինչեւ վերջին էջը՝ մանրամասնաբար եւ ամենուստ՝ կը ձգտի հասնիլ նպատակին։

Շատ մը տարեգիրներ, օրացոյց-տօնացոյցներ հրատարակելը տարեմտին՝ սովորութիւն եղաւ աշխարհիս չորս անկիւններն, ուր հայ անհատ մը կայ։ Գիտական, ազգային յօդուածներ չեն պակսիր անոնց մէջ, բայց հայ գաղթականութեան պատմութեան նպատակներ հայթայթողներուն մէջէն առաջիններէն կը համարնիք տարեգիրքս, որ հիմայ հետաքրքրութեամբ կը կարդացուի, եւ ապագային՝ խուզարկու պատմագրին